Ardshinbank

Moody's վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Արդշինբանկի վարկանիշը, հեռանկարը գնահատել է կայուն՝ հաստատելով այն հավասար Հայաստանի Հանրապետության բարձրացված վարկանշային մակարդակին

Moody's միջազգային վարկանիշային գործակալությունն վերագնահատել է Արդշինբանկի վարկանիշը՝ բարձրացնելով այն, իսկ հեռանկարը գնահատել է «կայուն»: Արդշինբանկին շնորհված են՝

երկարաժամկետ տեղական արժութային ավանդների վարկանիշ (LT Bank Deposits (Local Currency))՝ Ba3,

երկարաժամկետ արտարժութային ավանդների վարկանիշ (LT Bank Deposits (Foreign))՝ B1,

ելակետային վարկային գնահատման վարկանիշը (Baseline Credit Assessment)՝ Ba3,

կոնտրագենտի ռիսկի գնահատման վարկանիշ (Counterparty Risk Assessment)՝ Ba2:

Վարկանիշային գործակալությունը տրամադրել է վարկանիշի իր մեկնաբանություններն ու մասնավորապես նշել, որ Երկարաժամկետ տեղական արժութային ավանդների Ba3 վարկանիշը հիմնված է պետական պարտքի Ba3 վարկանիշի դրական հեռանկարի վրա: Երկարաժամկետ արտարժութային ավանդների B1 վարկանիշը պայմանավորված է Բանկի վարկունակության բարելավված դիրքով, ինչն արտահայտվում է Բանկի խնդրայարույց վարկերի տեսակարար կշռի նվազմամբ, Բանկի շահութաբերության աճով և կապիտալի դիրքի ամրապնդմամբ:

Բանկին շնորհված է Հայաստանի Հանրապետության սուվերեն վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը երկրում մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշ է:

«Արդշինբանկ» ՓԲԸ
Հայաստան, 0015, Երևան,
Գր. Լուսավորչի փող., 13
Հեռ. (+374-12) 222222
e-mail: office@ardshinbank.am
URL: www.ardshinbank.am